ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՔՐՄՈՒԹՅՈՒՆԸ, ԾԵՍԵՐԸ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԻ ԵՌԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆ ՈՒՐԱՐՏՈՒՈՒՄ

Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

Պաշտամունքային շինություններ: *Ուրարտական արձանագրություններում հիշատակվում են աստվածություններին ձոնված մի քանի շինություններ՝* É (*«տուն»*), É.BÁR (*«տաճար»*), É.BÁR ŠA.DI (*«լեռնային տաճար»*), É.BÁR TUR (*«փոքր տաճար»*), iarane (*«տաճար»*), suse (*«տաճար»*), KÁ (šeštele) (*«դարպաս»*), [illegible]puluse (*«կոթող»*), É širihane, É ašiḫuse: *Հայտնի է նաև մի փաստ աստվածությանը (Կուերային) աղբյուր ձոնելու մասին:*

É *«տուն»*. *այս բառի ուրարտերեն անունը հայտնի չէ: É գաղափարագրով նշանակվել են ինչպես աշխարհիկ, այնպես էլ պաշտամունքային կառույցները: Վերջիններս, այժմյան տվյալներով, ձոնվել են միայն Խալդե աստծուն և պալատական համալիրի մաս են կազմել:*

Էրեբունիից հայտնի են յոթ արձանագրություններ, որոնք պատմում են Արգիշթե I-ի (781—760 թթ.) կողմից Խալդեին É տաճար ձոնելու մասին: Նման տաճար Խալդե աստվածությանը ձոնել է նաև Մինուա արքան (810—781 թթ.) Մինուախինելե քաղաքում և Վանա լճի հյուսիս-արևելյան ափի մոտ, ինչպես և Սարդուրե II արքան (760—730 թթ.)՝ Արգիշթեխինելեում:

Կ. Լ. Հովհաննիսյանը ուրարտական տաճարները բաժանում է երեք հիմնական ձևերի՝ 1. ուղղանկյուն, լայնակի զարգացումով, 2. ուղղանկյուն, երկայնակի զարգացումով, 3. քառակուսի: Նա գտնում է, որ առաջին ձևով են կառուցված Էրեբունիի (նկ. 1_1) և Մինուախինելեի (նկ. 1_2) տաճարները[1], որոնք թերևս հենց É գաղափարագրով նշանակվող Խալդեի տաճարներն են: Սրանք ունեցել են ներքին բակ, աշտարակ և սյունասրահ[2]:

É.BÁR *«տաճար»*. *Ն. Վ. Հարությունյանի կարծիքով այս շինության անունը ուրարտերենում հնչել է* gudulani *ձևով[3]: Նման շինություններ կառուցել է Ռուսա I-ը (730—714 թթ.) Մուծածիրում, Ռուսա II-ը (685—645 թթ.)՝ Ռուսախինելեում և Թեյշեբաինեում: Ըստ Թուրաքկալեից գտնված մի սեպագիր սալիկի նման տաճար կառուցված է եղել և Կիլիբանե երկրում:*

É.BÁR *գաղափարագրով նշանակվող տաճարներն ամենայն հավանականությամբ ուրարտական տաճարների ճարտարապետական հորինվածքի երրորդ ձևն են կազմում և հայտնի են Թուրաքկալեի (նկ. 1_6), Ճմինի [Ալթինթեփեի (նկ. $1_{3,7}$)], Ագնավուրթեփեի, Կայալիգերեի (նկ. 1_4), Հայկաբերդի[4] (Զավուշթեփե) պեղումներից: Թուրաքկալեի տաճարը ունեցել է չորս անկյունային աշտարակներ, ցելա և ճշգրտորեն կողմնորոշված է եղել դեպի աշ-*

---

[1] К. Л. Оганесян. Урартские корни древнеармянского зодчества.—Древний Восток и мировая культура (ДВМК), М., 1981, с. 81.

[2] *Նույն տեղում: Կ. Լ. Հովհաննիսյանի կարծիքով ուրարտական առաջին կերպի տաճարների հորինվածքային առանձնահատկություններն իրենց արտահայտությունն են գտել Թանահատի, Դվինի, Դիլաքլարի բազիլիկների ճարտարապետությունում (նույն տեղում, էջ 92):*

[3] Н. В. Арутюнян. Новые урартские надписи Кармир-блура (НУНК). Ереван, 1966, с. 15.

[4] *Հայկաբերդի տաճարը կառուցված է եղել Սարդուրե Արգիշթորդու կողմից և ձոնված Իրմուշինե աստծուն (տե՛ս* Recent archaeological research in Turkey.—Anatolian Studies Journal of the British Institute of archaeology at Ankara. Vol. XIV, 1964, p. 23).

խարհի չորս կողմերը։ Ալթինթեփեի տաճարը ունեցել է նաև սյունաշար՝ ցեղայի շուրջը (նկ. 1_3)։

Suse. «սուսեն» ուրարտական տաճարների ավելի տարածված ձևն է եղել։ Հայտնի է, որ նման տաճարներ կառուցվել են Իշպուինե, Իշպուինե և Մինուա, Մինուա, Արգիշթե I, Ռուսա II արքաների գահակալության տարիներին։ «Սուսեն» Կ. Լ. Հովհաննիսյանի առանձնացրած տաճարների երրորդ խումբն է կազմում։ Մ. Ա. Իսրայելյանը «սուսեն» բնորոշել է որպես «պալատական գողտրիկ տաճար». ձոնվել է հիմնականում խալդե աստծուն[5]։ Հայտնի է մեկ բացառություն. Էրեբունեում եղել է «սուսե»՝ ձոնված Իվարշա աստվածությանը։ Ենթադրվում է, որ Մուծածիրի տաճարը [նկ. 1_5 (պատկերված է Դուր-Շարուկինի XIII դահլիճում)], «սուսե» է եղել[6]։ Հնարավոր է, որ suse հասկացությունը նշանակվել է É.BÁR TUR («փոքր տաճար») գաղափարագրով. նման մի տաճար է հիմնել Ռուսա II-ը Թեյշեբաինեում։

Ամենայն հավանականությամբ խալդեին ձոնված «սուսե» տաճարներում իրագործվել է նաև այլ աստվածությունների պաշտամունքը. այդ մասին է վկայում Մհերի դռան արձանագրությունում «խալդե աստծու suse-ի աստվածներին» կատարված զոհաբերությունը։ Խալդեին ձոնված այս տաճարներում կատարվել են նաև Ուարուբաինեին կամ Ուարուբաինեին և Խալդեին նվիրված արարողություններ, այսպես. Մուծածիրում այս դիցուհին պաշտվել է Խալդեին ձոնված տաճարում։ Բացի այդ, Աշոտակերտի արձանագրությունում խոսվում է Խալդեին «սուսե» ձոնելու մասին և միաժամանակ կարգադրվում է Խալդեի հետ միասին զոհեր մատուցել նաև Ուարուբաինե դիցուհուն[7]։

Iarane. Իարանե շինություն հիմնադրելու մասին խոսվում է ուրարտական երեք արձանագրություններում. Իշպուինե և Մինուա, ինչպես և Ռուսա I արքաները Խալդե աստծու համար այսպիսի տաճարներ են հիմնել Մուծածիրում, իսկ Մինուա արքան՝ Շեբեթերիայում։ Ռուսա I-ը Մուծածիրում կառուցել է մեկից ավելի նման տաճարներ, որոնք ձոնվել են տարբեր աստվածությունների։ Այս տաճարների կառուցման մասին խոսելիս Ռուսա I-ը նշում է, որ դրանք հիմնադրվել են բարձր լեռնային ճանապարհի վրա[8]։ Ամենայն հավանականությամբ լեռնային ճանապարհի վրա է կառուցվել նաև Իշպուինե և Մինուա արքաների հիմնած տաճարը[9]։ Արձանագրությունում այս հանգամանքի հատուկ շեշտված լինելը հիմք է տալիս ենթադրելու, որ «իարանե» տաճարներն ունեցել են նաև ճանապարհորդներին ապաստան տալու նպատակ։ Հնարավոր է, որ այս տաճարները նշանակվել են նաև É.BÁR ŠA.DI («լեռնային տաճար») գաղափարագրով։ Նման տաճար է հիմնել Ռուսա I-ը Մուծածիրում։

Iarane հասկացությունը Կելիշինի երկլեզվյան արձանագրության ասուրական տեքստում համապատասխանում է par(akku) «տաճար» կամ այլ ընթերցմամբ՝ maš(šakku) «բնակարան» բառը[10]։

Գ. Ա. Մելիքիշվիլին գտնում է, որ «իարանեները» եղել են փոքր շինություններ և բացատրում է «часовня» բառով։ Սակայն, ըստ Կելիշինի արձանագրության տվյալների, Իշպուինե և Մինուա արքաներն իրենց նոր հիմնած Iarane տաճարին նվիրել են զենքեր, անոթներ, անասուններ։ Հետևաբար խոսքն այստեղ ոչ թե մատուռի, այլ համալիրի մասին է, որն ունեցել է իր տնտեսությունը. ուրեմն նաև՝ սպասարկող անձնակազմ ու օժանդակ շինություններ։

---

5 Մ. Ա. Իսրայելյան. Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն. Երևան, 1971, էջ 78։

6 К. Л. Оганесян. Указ. соч., с. 81.

7 Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи (УКН). М., 1960, № 25, стрк. 10.

8 УКН, № 264, урарт. текст, стрк. 4—5.

9 УКН, № 19, урарт. текст, стрк. 5—7.

10 И. И. Мещанинов. Аннотированный словарь урартского (биайнского) языка. Л., 1978, с. 137.



Նկ. 1

Ամենայն հավանականությամբ ճիշտ է Ի. Ի. Մեշչանինովի տեսակետը, որը ıaranc բառը թարգմանում է «обитель» ձևով։

KÁ, ^{GIS}KÁ, KÁ^{MEŠ}, šeštele «դարպաս» («դարպասներ»). ուրարտական արձանագրություններում ամենից հաճախ հիշատակվող պաշտամունքային շինությունն է։ Ուրարտուում մ. թ. ա. IX դարում արդեն կային «դարպասներ»՝ ձոնված Խալդե, Թեյշեբա, Շիվինե, Ուա աստվածություններին, որոնք կառուցված են եղել թերևս նախքան ուրարտական պետականության կազմավորվելը։ Ուրարտական արքաները, հայտնի տվյալների համաձայն, «դարպասներ» են ձոնել միայն Խալդե աստծուն։

«Դարպասների» ձևի մասին կան տարբեր կարծիքներ։ Բ. Բ. Պիոտրովսկին և Ի. Մ. Դյակոնովը գտնում են, որ դրանք ժայռափոր որմնախորշեր են, որոնք կարող են ունենալ նաև կից պաշտամունքային կառույցներ։ Այդպիսին էր, օրինակ, Մհերի դուռը, դեպի ուր բարձրանում էին աստիճաններ, իսկ ժայռի ստորոտին, որի վրա փորված է «դուռը», կա ժայռափոր մի սենյակ, ինչպես և Աշոտակերտի որմնախորշը, դեպի ուր բարձրանում են յոթ աստիճաններ և որի վրա նույնպես փորագրված է պաշտամունքային բովանդակություն ունեցող արձանագրություն։ Որ «դարպաս» հասկացությամբ իրոք նշանակվում էին հիմնականում որմնախորշերը[11], վկայում է նաև Մհերի դռան արձանագրության հետևյալ հատվածը. «Խալդե աստծուն, տիրոջը՝ Իշպուինե Սարդուրորդին և Մինուա Իշպուինորդին այս դարպասները կառուցեցին»[12]։

Բացի այս, Մհերի դռան արձանագրությունը (շատ ավելի վաղ, քան կարդացվել են ուրարտական սեպագրերը) հայերը «դուռ» են անվանել. ավանդույթ, որն ամենայն հավանականությամբ ուրարտական արմատներ պիտի ունեցած լինի։

Գ. Ա. Մելիքիշվիլին, սակայն, գտնում է, որ «դարպասներ» են անվանվել Ուրարտուի հիմնական պաշտամունքային կառույցները՝ տաճարները, քանի որ «դարպասների» կառուցման մասին արձանագրությունները գրված են շինարարական քարերի վրա և որ, օրինակ, ամրոցի և «դարպասների» կառուցման մասին խոսելիս օգտագործվում է նույն՝ šidištu «կառուցել» բայը, որը նրա կարծիքով անհարկի է, եթե խոսքը ժայռափոր որմնախորշերի մասին է։ Բացի այդ, նա մատնանշում է Մինուա արքայի Գյուղակի արձանագրությունները, ուր միևնույն շինության մասին խոսելիս Մինուան մի դեպքում ասում է, որ կառուցել է «դարպասներ», մյուս դեպքում՝ «տուն Խալդե աստծու համար»[13]։

Վերոհիշյալ երկու տեսակետն էլ հիմնավորված են փաստերով և միմյանց չեն հակասում. ընդհակառակը, լրացնում են իրար։ Ամենայն հավանականությամբ «դարպասներ» հասկացության ներքո նկատի է առնվել ինչպես առանձին մի կառույց՝ որմնախորշը, այնպես էլ մի ամբողջ համալիր՝ տարբեր տաճարներով, օժանդակ կառույցներով, տնտեսությամբ ու համապատասխան տարածքով։ Այդպես են ընկալվում «դարպասները» Կելիշինի արձանագրությունում. «...(Իշպուինեն) մատուցեց կրկին շատ անասուն, դրեց այդ ամենը (Խ)ալդե աստծու դարպասների մոտ և տվեց (Խ)ալդե աստծուն, հանուն իր կյանքի։ Նա բերեց 1112 ցուլ, 9120 այծ և ուլ, աղատ (օգտագործման համար, ինչպես նաև) 12480 մեծ այծ՝ զոհաբերությունների (համար)»[14]։ Այնուհետև՝ «(Խ)ալդե աստծու Արդինե քաղաքի դարպասներից ազատ (") անասունը (")

---

[11] Б. Б. Пиотровский. Ванское царство. М., 1959, с. 208; И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 147.

[12] УКН, № 27, стрк. 1—2, 32—33; И. М. Дьяконов, Г. А. Меликишвили. Древневосточные материалы по истории народов Закавказья, I. Наири—Урарту.— Вестник древней истории (ВДИ). 1956, № 2, с. 72.

[13] Г. А. Меликишвили. Вопросы социально-экономической истории Урарту.—ВДИ, № 4, с. 32—33, прим. 3.

[14] УКН, № 19, урарт. текст, стрк. 7—16, с. 127.

թող տանեն, երբ տան (փոխարենը) իրեր»[15]։ Ինչպես երևում է, այստեղ նվիրաբերությունները կատարվում են խալդե աստծու դարպասներին և պիտի որ այդ զոհաբերությունների մի զգալի մասը տնօրիներ խալդե աստծու դարպասների քրմությունը. իսկ նույնիսկ ոչ շատ երկար ժամանակ 1112 ցուլերին և 9120 այծերին ու ուլերին պահելու և խնամելու համար անհրաժեշտ էր ունենալ բավականին մեծ տարածություն (արոտատեղի), գոմեր և աշխատող ձեռքեր՝ այսինքն լավ կազմակերպված տնտեսություն։

Թոփուզավայի արձանագրությունում Ռուսա II-ը հաղորդում է, որ «...խալդե աստծուն, տիրոջը տաճար (É.BAR ŠA.DI) նրա աստվածայնությանը, դարպասներում ես կառուցեցի»[16]։ Հետևաբար պիտի ենթադրել, որ «դարպասները» ընդգրկել են բավականին մեծ տարածք, ուր կարելի էր տաճար կառուցել։

Բացի այդ, դժվար է պատկերացնել, որ Մհերի դռան արձանագրությունում հիշատակված Թեյշեբայի մեծ պաշտամունքային կենտրոն Էրիդիայում և Շիվինի աստծու պաշտամունքային կարևոր կենտրոն Ուիշինեում եղել են միայն նրանց ձոնված որմնախորշեր կամ մեն մի տաճար (Մհերի դռան արձանագրությունում զոհեր են մատուցվում «Ուիշինե քաղաքի Շիվինե աստծու դարպասներին» և «Էրիդիա քաղաքի Թեյշեբա աստծու դարպասներին»)։ Անկասկած այստեղ ևս «դարպաս» ասելով՝ հասկացվել է տաճարային մի ամբողջ համալիր՝ օժանդակ կառույցներով և այն սպասարկող քրմությամբ հանդերձ։

Ամենայն հավանականությամբ, «դարպաս» (պաշտամունքի առումով) ասելով՝ ուրարտական արձանագրություններում նկատի են առնվել նաև քաղաքի կամ ամրոցի իրական դարպասները։ Այս մասին է վկայում Իշպուինե արքայի խալդեին ձոնված «դարպասի» մասին պատմող արձանագրությունը, որը գտնվում է Վան քաղաքի միջնաբերդի արևելյան դարպասի մոտ[17] և նկատի ունի հենց այդ՝ այժմ «Թավրիզյան» կոչվող մուտքը։ Այս հանգամանքը բացառիկ մի երևույթ չպետք է դիտել, քանի որ երբեմն քաղաքների կամ մեծ ամրոցների դարպասները ձոնվում էին այս կամ այն աստծուն. մասնավորապես Նիպուրի դարպասներից մեկը ձոնված էր Էնլիլ աստծուն, Հռոմի դեպի Ֆորում տանող դարպասը՝ Յանուս աստծուն, Վաղարշապատում կար դարպաս՝ ձոնված Արեգին և այլն։

Տաճարի կամ ամրոցի դարպասը ուներ բավականին մեծ նշանակություն, օրինակ՝ հեթիթական արքայական ծիսակարգում. որոշ ծեսեր սկսվում էին առավոտյան վաղ, պալատի դարպասների բացումով, որոնց միջև հայտնվում էր արքան. տեսարան, որը նմանեցվում էր օրվա բացման ու արևածագի հետ։

Վ. Գ. Արձինբան, քննարկելով դարպասների պաշտամունքը հեթիթական աշխարհում, մատնանշում է նաև, որ դրանք կարող են դիտվել որպես անցում աշխարհիկ ու պաշտամունքային աշխարհների միջև։ Նման նշանակություն կարող էին ունենալ ոչ միայն արքայական պալատի դարպասները, այլև հասարակության մյուս անդամների տների դռները առօրյա կյանքում[18]։

Ըստ երևույթին ժայռափոր «դարպասների» մասին Ուրարտուում կար նըման պատկերացում, քանի որ, ինչպես մատնանշում է Բ. Բ. Պիոտրովսկին, առաջավորասիական հավատալիքների համաձայն, համանման դարպասներից էր դուրս գալիս աստվածությունը։ Այս պատկերացումը պահպանված է նաև հայկական էպոսում. էպոսի վերջին ճյուղի հերոսը՝ Փոքր Մհերը, որին այլևս չի կարողանում իր վրա կրել երկիրը, Մհերի դռնով մտնում է Վանա ժայռի

---

15 УКН, № 19, урарт. текст, стрк. 23—25, с. 128.

16 УКН, № 264, урарт. текст, стрк. 13—14, с. 325.

17 УКН, № 18.

18 В. Г. Ардзинба. Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, с. 49, 146.

մեջ. մարդիկ սպասում են նրա վերադարձին և դա կապում են համընդհանուր բարեկեցության հետ[19]։

Որմնախորշ «դարպասների» առջև եղած տարածքը կրոնական արարողությունների ու զոհաբերությունների վայր էր[20]։ Կային «դարպասներ», որոնց առջև զոհեր էին մատուցվում որևէ մեկ աստծու համար և կար դարպաս, որ ձոնված էր համայն Ուրարտուի աստվածություններին՝ Մհերի դուռը։

Ուրարտուում, ասելով «Խալդե աստծու դարպաս», եթե չի նշվում «դարպասի» գտնվելու վայրը, նկատի է առնվել նաև ոչ թե պաշտամունքային որևէ շինություն, այլ այս աստվածության երկնային, առասպելական տաճարը. այլապես անհասկանալի են այն զոհաբերությունները, որոնք մատուցվում են «Խալդե աստծու դարպասներին» ընդհանրապես[21]։

NA[4]puluse, puluse «կոթող»[22]. ուրարտական ամենապարզ և ամենատարածված պաշտամունքային կառույցներից է։ Պատվանդանի վրա կանգնած, հարթ, վերևում՝ հաճախ կիսաշրջանաձև ավարտով, արձանագրված, ավելի սակավ՝ առանց արձանագրության ուղղանկյունաձև սյուն է։ Ջոնվում էր հիմնականում Խալդե աստծուն. հայտնի են միայն վեց կոթողներ, ձոնված այլ աստվածությունների, որոնցից երկուսը՝ Թեյշեբա և մեկական կոթող՝ Շիվինե, Խուտուինե, Էլիպուրե և Կուերա[23] աստվածություններին։

Կոթողների վրա արձանագրված են Ուրարտուի արքաների հաշվետվությունները Խալդեին՝ իրենց կատարած շինարարական աշխատանքների, ռազմարշավների մասին, զոհաբերությունների կատարման կարգն ու ժամանակը, իրենց գոհունակությունը աստծուց նրանից ստացած մեծության ու հաղթանակների համար և նրանց «խնդրագրերը», որոնցում Խալդեից (Թեյշեբայից, Շիվինեից, Խուտուինեից) խնդրվում է կյանք, ուրախություն, մեծություն և այլ բարիք։ Հայտնի են նաև կոթողներ, որոնք ձոնված են աստվածությանը որպես հուշարձան, առանց լրացուցիչ տեքստի։

Այս կոթողները տարածված էին համայն Ուրարտուով. և նրանց առջև կատարվել են մեծ տոնակատարություններ ու զոհեր են մատուցվել աստվածություններին[24]։ Այս կամ այն աստվածությանը ձոնված կոթողներ կային նաև հեթիթական աշխարհի պաշտամունքային կենտրոններում, քաղաքի տարածքում կամ բնակավայրից դուրս, արձակ տարածությունում. սովորաբար պուրակի մեջ, աղբյուրի մոտ և կամ լեռան վրա։ Այս կոթողների առջև կատարվում էին արարողություններ ու զոհաբերություններ։ Անտախշում ծեսի ժամանակ, օրինակ, Տիպպուվե քաղաքի կոթողի մոտ, արարողություններ էին կատարում ու աստվածությանը զոհեր էին մատուցում հեթիթների թագավորն ու թագուհին[25]։

Ս. Գ. Բարխուդարյանի կարծիքով ուրարտական կոթողների համար դաղափարատիպ են հանդիսացել մենհիրներն ու «վիշապները»։ Ուրարտական կո-

---

19 Այս առումով ուշագրավ է, որ ուրարտական որմնախորշ «դարպասների» վրա երբեմն գրվում էին խնդրագրեր՝ ուղղված Խալդե աստծուն (УКН, № 27, стрк. 76—77)։ Երբեմն նրան խնդրագրերով դիմում էին հենց «դարպասներին» (տե՛ս, օրինակ, НУНК, I, стрк. 4—5)։

20 УКН, № 65, стрк. 23—36; И. М. Дьяконов. Языки древней Передней Азии. М., 1967, с. 147.

21 УКН, № 27, стрк. 16, 58, № 125, стрк. 10, НУНК, I, стрк. 8.

22 NA[4]puluse «կոթող» բառով նշանակվում էր արձանագրված կոթողը, երբեմն նաև ընդհանրապես «արձանագրություն» հասկացությունը (Б. Б. Пиотровский. Ванское царство, с. 228)։

23 УКН, № 94, 95, 104, 106. Վերջինս ձոնված է Խալդեին և Կուերային, թերևս այստեղ նկատի է առնված նրանց միջև գոյություն ունեցած ինչ-որ աղգակցական կապ։

24 УКН, № 65.

25 В. Г. Ардзинба. Указ. соч., с. 9.

թույններն իրենց հերթին օրինակ են եղել հայկական քառակող կոթողների ու խաչքարերի համար[26]։

Արժանահիշատակ է, որ հենց ուրարտական պաշտամունքային կառույցները հայերի կողմից ընկալվել են որպես սրբություններ. սրբատեղի էր, մասնավորապես, Մհերի դռան արձանագրությունը, իսկ ուրարտական կոթողները շատ հաճախ վերափոխվում էին խաչքարերի, շարունակելով մնալ պաշտամունքի առարկա։ Հետաքրքիր է նաև այն փաստը, որ որոշ հայկական եկեղեցիներ ու վանքեր կառուցված են այն վայրերում, ուր ուրարտական ժամանակաշրջանում եղել են պաշտամունքային շինություններ. մասնավորապես Վարագա վանքը կառուցվել է լեռան վրա, որը ուրարտական ժամանակաշրջանում ևս ունեցել է պաշտամունքային մեծ նշանակություն։ Միջնադարյան այս վանքի տարածքում են գտնվել Խալդիին և Թեյշեբային ձոնված արձանասյուներ և երկ. այլ շինարարական բնույթի արձանագրություն։

Լցմիածնի Մայր տաճարի բեմի տակ հայտնաբերվել է ուրարտական չարձանագրված մի կոթող, որն, ամենայն հավանականությամբ, մինչև եկեղեցու կառուցումը կանգնած է եղել մոտակայքում։ Մինուա և Իշպուինե արքաների մի բարակոթող՝ ձոնված Խալդե աստծուն, դրված է եղել Վան քաղաքի Սուրբ Պողոս եկեղեցու խորանի պատի մեջ։ Այս նույն եկեղեցու պատի շարվածքում գտնվել է Մինուա արքայի մեկ այլ արձանագրված կոթող. եկեղեցում պահվել է նաև Սարդուրե II արքայի հայտնի կոթողը։ Մինուա արքայի մի կոթող էլ գտնվել է Սղդայի ավերված եկեղեցու պատի շարվածքում։ Արձանագրված կոթողներ են պահվել նաև Վանի Սուրբ Պետրոս, Սուրբ Վարդան եկեղեցիներում, Գյուսննց գյուղի Ս. Հովհաննես եկեղեցում, Մեծոփա վանքում, Զվարթնոցում։ Արձանագրված քարեր են պահվել Վանի Հայկավանք և Գյուղակի եկեղեցիներում, Կարմրավոր վանքում և այլն։ Այսինքն՝ ուրարտական կոթողների և արձանագրված քարերի մի նշանակալից մասը պահվել է հայկական եկեղեցիներում կամ շարվել նրանց պատերի մեջ։ Այս (մանավանդ վերջին) հանգամանքը խորհել է տալիս, որ միջին դարերում ուրարտական կոթողները շարունակում են մնալ պաշտամունքի առարկա և որ դա պայմանավորված էր ոչ միայն կոթողների վերաիմաստավորմամբ (դառնում էին խաչքարեր), այլև այն սրբացված վայրի պատճառով, ուր կանգնեցված են եղել այդ հուշարձանները։ Այդ վայրերը, հնարավոր է, սրբատեղի են եղել մինչև ուրարտացիների կողմից կոթողների հաստատվելը, մնալով այդպիսին նաև ուրարտական պետականության անկումից հետո, հայկական իրականությունում։

Ésirihane կառույցը հիշատակված է Ռուսա II-ի Կարմիր բլուրի մեծ և Արգիշթե I-ի Արմավիրի ու Աղնավուրթեփևի արձանագրություններում։ Ն. Վ. Հարությունյանի կարծիքով սա պաշտամունքային նշանակության կառույց է եղել։ Կարմիր բլուրում այն կառուցվել է «սուսե» տաճարի առջև ու տաճարական համալիրի շինություններից մեկն է եղել։ Ենթադրվում է, որ այստեղ են դրվել աստվածությունների արձանները[27]։

Éašihuse շինությունը հիշատակված է Մինուա արքայի երեք, Սարդուրե II արքայի էրեբունեի և Արգիշթե I արքայի Արգիշթեխինելեի արձանագրություններում։ Մինուա արքայի արձանագրությունները փորագրված են խարսխաքարերի վրա (երկուսը գտնվել են Վանում, մեկը՝ Վարագա վանքի տարածքում) և նույն բովանդակությունն ունեն՝ «Մինուա Իշպուինորդին այս Éašihuse կառուցեց»[28]։ Այն հանգամանքը, որ «աշիխուսեին» կառուցման մասին պատմող արձանագրություններն այստեղ գրված են խարսխաքարերի վրա, հիմք է տալիս ենթադրելու, որ այս շինությունը ունեցել է սյունասրահ։

---

26 Ս. Գ. Բարխուդարյան. Հայաստանի կոթողային հուշարձանները.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 7—8, էջ 53—80։

27 НУНК, с. 24—26, 34.

28 УКН, № 83, 84, 86.

Ֆ. Վ. Քյոնիգի կարծիքով «աշիխուսենն» եղել է տաճար, որտեղ զոհեր են մատուցվել աստվածություններին[29]։ Այս առումով ուշագրավ է, որ Օշականի ուրարտական տաճարը կառուցված է եղել սյունասրահի ձևով։ Այնտեղ դրված են եղել կուռքեր, որոնց մատուցված զոհերի մնացորդները թաղվել են տաճարի հատակին փորված հորերում։ Հորերը ծածկվել են սալերով[30]։

1983 թ. Արգիշթեխինելե քաղաքի արևմտյան ամրոցի հրապարակում գտնված արձանագրությունում հիշատակվում է, որ Արգիշթե I-ը «աշիխուսեն» տան տակ կառուցել է շտեմարան։ Այսպիսով, պիտի ենթադրել, որ «աշիխուսենն» մի շենք է եղել, կազմված հիմնականում սյունասրահից, որը Արգիշթեխինելեում ունեցել է նաև ամբար։ Արգիշթեխինելեի արևմտյան ամրոցում, նորահայտ արձանագրության գտնված վայրին շատ մոտ, բակի հյուսիսային թևում, պեղված է սյունազարդ դահլիճից, մեծածավալ ցորենի պահեստից և նրան կից քառանկյունի փոքր սենյակից բաղկացած մի շինություն, որի սյունազարդ ընդարձակ դահլիճի հատակը ամբարի հատակից բարձր է 3,5 մետրով։ Վերոհիշյալ դահլիճի ուրարտական շերտում հայտնաբերվել են պաշտամունքային կիրառության շքեղ անոթներ և ճրագների բեկորներ ու երկաթյա մեծ շքագամեր, որոնք վկայում են, որ այս շինությունը պաշտամունքային նշանակություն է ունեցել։ Բացառված չէ, որ արձանագրությունում խոսվում է հենց այս շենքի մասին[31]։

Ըստ երևույթին ուրարտական «աշիխուսեն» տունն իր ունեցած կիրառական նշանակությամբ համապատասխանել է հեթիթական Ė šinapsi անվանված շինությանը, որը կրոնական նշանակության մի կառույց էր, ուր կատարվում էին զոհաբերություններ աստվածներին[32]։

Ուրարտացին տանը պաշտոն էր մատուցում հատուկ սրբազան անկյունում, որը գտնվում էր կենտրոնական սրահում։ Այնտեղ դրվում էր զոհասեղանը աստվածությունների արձաններով ու համապատասխան սպասքով[33]։ Նման անկյուններ սարքավորվում էին նաև մառաններում[34]։

Քրմությունը։ Ուրարտական քրմության մասին եղած տեղեկությունները սակավաթիվ են։ Ստուգապես հայտնի է միայն, որ մ. թ. ա. VIII դարի վերջին քառորդին Մուծածիրի տաճարի քրմապետն է եղել Մուծածիրի արքա Ուրզտնան։ Ենթադրվում է, որ ուրարտական պետության պաշտամունքային կենտրոնը Մուծածիր քաղաքն էր, որի խալդե աստծու տաճարի գլխավոր քուրմը եղել է նաև Ուրարտական պետության քրմապետը և որ այդ պաշտոնը Իշպուինե և Մինուա արքաների օրոք ժառանգել է Ուրարտուի արքայազուններից ավագը[35]։

Այս ենթադրությունը հիմնված է Սարգոն II արքայի հաղորդած այն տեղեկության վրա, թե Մուծածիրի խալդեի տաճարում դրված է եղել Սարդուրե Իշպուինորդու արձանը. նույն արձանագրությունում ասվում է նաև, որ այդ արքան ձուլել է տվել մեկ ցուլի և մեկ կովի արձաններ, իրենց հորթի հետ միասին, այս նպատակի համար օգտագործելով խալդե աստծու տաճարում պահ-

[29] F. W. Konig. Handbuch der chaldischen Inschriften (HChI). Teil I—II, Graz, 1955—1957, S. 175.

[30] С. А. Есаян. Раскопки 1979 г. в Ошаканс.—Гос. музей истории Армении, музей основания Еревана «Эребуни».—Научная сессия. Тезисы докладов, Ереван, 1981, с. 15—16.

[31] Ռ. Մ. Թորոսյան, Ս. Գ. Հմայակյան. 1983 թ. պեղումները Արգիշթեխինելեում և նորահայտ ուրարտական արձանագրությունը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 4, էջ 166—168։

[32] А. Б. Аракеляп. Термин (Ė)šinapši в хеттских клинописных текстах.—Историко-филологический журнал, 1975, № 3, с. 241.

[33] А. А. Мартиросян. Аргиштихинили. Ереван, 1974, с. 112—117.

[34] Б. Б. Пиотровский. Кармир-блур II. Ереван, 1952, с. 21—27.

[35] Г. А. Мелникишвили. Древневосточные материалы по истории народов Закавказья. I, Наири—Урарту. Тбилиси, 1954, с. 204, 237, 332.

վող պղինձը։ Այն հանգամանքը, որ Սարդուրեն իր հայեցողությամբ օգտվել է տաճարի պղնձից և որ Սարդուրե Իշպուինորդու՝ Խալդեի տաճարում դրված արձանը պատկերել է նրան աղոթողի տեսքով[36], հիմք է տվել այն ենթադրությանը, թե Սարդուրեն եղել է Մուծածիրի Խալդեի տաճարի գլխավոր քուրմը, իսկ որ Սարդուրե Իշպուինորդին կրել է պապի՝ Սարդուրե I-ի անունը առիթ է ծառայել ենթադրելու, թե նա Իշպուինե արքայի ավագ որդին է եղել[37]։ Սակայն դեռևս Ն. Դ. Ադոնցը ցույց է տվել, որ Սարգոն II-ի արձանագրությունում առկա է թյուրիմացություն՝ դպիրը սխալվել և Իշպուինե Սարդուրորդի գրելու փոխարեն արձանագրել է Սարդուրե Իշպուինորդի[38]։

Ն. Դ. Ադոնցի եզրակացությունը ավելի քան հավանական է, քանի որ Սարգոն II արքայի արձանագրությունում Սարդուրե Իշպուինորդին անվանված է «Ուրարտուի արքա»[39], իսկ այդ անունով թագավոր Ուրարտուն չի ունեցել. բացի այդ, Իշպուինե Սարդուրորդու՝ Մինուայի հոր անունը հայտնի է բազմաթիվ ուրարտական, ինչպես նաև ասուրական արձանագրություններից, այն դեպքում, երբ Սարդուրե Իշպուինորդու անունը վկայված է միայն վերոհիշյալ ասուրական արձանագրությունում։ Այնուհետև՝ Իշպուինե արքան իր արձանագրություններում հաճախ հիշատակում է իր Մինուա որդու անունը, որի հետ նա համատեղ թագավորել է։ Մի արձանագրությունում նա, իր Մինուա որդու անվան կողքին հիշատակում է թոռան՝ Մինուայի որդի Ինուշպուայի անունը՝ իր, որդու և թոռան համար խալդե աստծուց խնդրելով «կյանք (ողջություն) և մեծություն»[40]։ Եթե Իշպուինեն ունեցած լիներ այլ որդի, ապա նրա անունը պիտի հիշատակվեր գոնե այս՝ Խալդեին ձոնված արձանագրությունում։ Եվ վերջապես, Իշպուինե արքան չէր կարող Սարդուրե անունով որդի ունենալ հետևյալ պատճառով. ինչպես ցույց են տվել Ի. Մ. Դյակոնովի դիտողությունները, Հին Արևելքում, ինչպես նաև Ուրարտուում, երեխաներին սովորաբար չէին տալիս ղեռևս ողջ հարազատի անունը, հակառակ դեպքում կնշանակեր այդ հարազատի մահը ցանկանալ[41]։ Ուրեմն պիտի ենթադրել, որ Իշպուինե արքայի ավագ որդին ծնվել է Սարդուրե I-ի (Իշպուինեի հոր) մահվանից և իր թագավորելուց հետո միայն։ Սակայն Իշպուինեն թագավորել է ընդամենը 10—15 տարի (մ. թ. ա. մոտ. 823—811 թթ.), որից հետո, ընդունված տեսակետի համաձայն, մ. թ. ա. մոտ. 810 թ. գահը ժառանգել է Մինուան։ Հետևաբար երկու տղա մեծացնելու և կրտսեր որդու որդուն տեսնելու համար Իշպուինեին մընում են հենց այդ 10—15 տարիները, որը այնքան էլ հավանական չէ։ Հետևաբար ճիշտ է Ն. Ադոնցի այն տեսակետը, թե Սարդուրե Իշպուինորդի անունով արքայազն չի եղել։

Ինչպես ցույց են տվել վերջին տարիներին հայտնաբերված նյութերն ու կատարված ուսումնասիրությունները, Ինուշպուա Մինուաորդին նույնպես չէր կարող լինել Մուծածիրի տաճարի գլխավոր քուրմը, քանի որ նա հորից՝ Մինուա արքայից հետո կարճ ժամանակով ժառանգել է Ուրարտուի գահը։ Հետևաբար, պիտի ենթադրել, որ Իշպուինե և Մինուա արքաների ավագ որդիները Մուծածիրի տաճարի քրմապետեր, կամ Մուծածիրի իշխաններ չեն եղել։

---

36 И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту (АВИИУ).—ВДИ, 1951, № 2—4, № 49 (367).

37 Г. А. Меликишвили. Указ. соч., с. 204.

38 Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 194։ Ն. Դ. Ադոնցի այս տեսակետը ընդունված է «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակությունում, ուր նշված է, սակայն, որ այս տեսակետը լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի (Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Երևան, 1971, էջ 393, ծան. 2)։ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի կարծիքով Սարդուրե Իշպուինորդին դարձել է Մուծածիրի փոխարքա (К. Ф. Леман-Хаупт. Вступительная лекция по истории и культуре халдов.—Труды Тбилисского гос. университета, 1938, VI, с. 126).

39 АВИИУ, № 49 (367).

40 УКН, № 18.

41 И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.—Л., 1963 (УПД), с. 62.

Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Մուծածիրի Խալդն աստծու տաճարի քրմապետ Ուրզանան Ուրարտուի արքայական ցեղից չէր. հակառակ դեպքում այդ մասին անպայման կհիշատակեր Սարգոն II-ը։

Սպասելի է, որ ուրարտական պետության քրմապետը լինի նա, ում անունից սահմանվում էին զոհաբերությունների և կատարվելիք արարողությունների կարգն ու ժամանակը. ըստ սկզբնաղբյուրների, նման կարգագրություններ արել է միայն արքան[42]։ Ավելին, Իշպուինե և Մինուա արքաների համատեղ գահակալության տարիներին Աշոտակերտի դռան արձանագրությունում նման կարգագրություններ կատարում է հայրը՝ Իշպուինե արքան, թեև արձանագրությունում հիշատակվում է նաև Մինուայի անունը[43]։

Այսպիսով, պետք է ենթադրել, որ ճիշտ է եղել ավելի վաղ արտահայտված այն տեսակետը, թե ուրարտական պետության քրմապետն է եղել Ուրարտուի արքան և որ երկիրը կառավարվել է աստվածապետական ռեժիմով[44]։

Խալդե աստծու կարևորագույն պաշտամունքային կենտրոնը եղել է Մուծածիր (Արդինե) քաղաքը, սակայն այդ տաճարի քրմապետը չի եղել ուրարտական պետության գլխավոր քուրմը, իսկ Մուծածիրը չէր կարող լինել Ուրարտական պետության պաշտամունքային կենտրոնը, քանի որ այն, ըստ էության, մ. թ. ա. IX դարում, երբ կազմավորվում էր պետությունը, անկախ մի իշխանություն էր, որը մ. թ. ա. 828 թ. նվաճեց Սալմանասար III-ի Դայան-Աշուր զորավարը։ Իշպուինե և Մինուա արքաների համատեղ գահակալության տարիներին միայն Մուծածիրը դառնում է Ուրարտուից կախյալ մի իշխանություն՝ պահպանելով, սակայն, իր ինքնուրույնությունը (չի դառնում մի սովորական նահանգ Ուրարտուի կազմում)։ Իրենց այս դիրքը Մուծածիրի արքաները կարողանում են պահպանել ընդհուպ մինչև մ. թ. ա. 714 թ., երբ Սարգոն II-ը նվաճում է Մուծածիրը և միացնում ասորեստանյան մարզերից մեկին։

Դժվար է պատկերացնել, թե պետության պաշտամունքային կենտրոնը եղել է մի քաղաք, որը չի գտնվել այդ երկրի կազմում. հետևաբար պիտի ենթադրել, որ Մուծածիրը եղել է թագավորական տոհմի համար կարևոր պաշտամունքային մի վայր. պետության պաշտամունքային կենտրոնը, սակայն, եղել է այլ տեղում, ամենայն հավանականությամբ, Տուշպա քաղաքում։ Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ համաուրարտական դիցաբանը ներկայացնող Մհերի դռան արձանագրությունը՝ համայն ուրարտական աստվածություններին ձոնված «դարպասները», որը ուրարտական պետության ամենակարևոր պաշտամունքային շինությունն էր, գտնվում էր Տուշպայում՝ Վանա ժայռի վրա։

Նկատի ունենալով ուրարտական տաճարների այն հոծ ու լայն ցանցի գոյությունը, որով պատված էր երկիրը և որը աճում էր երկրի սահմանների ընդլայնման զուգահեռ, պիտի ենթադրել, որ ուրարտական քրմությունը՝ այդ տաճարների սպասարկողն ու համապետական կրոնի տարածողը, բավական հզոր մի ուժ էր։ Ամենայն հավանականությամբ քրմության ներկայացուցիչներն էին, որ մասնագիտանում էին գիտության տարբեր բնագավառներում և տեղերում ղեկավարում գյուղատնտեսական աշխատանքներն ու ջրաբաշխության գործը, քանի որ վերջիններիս կատարման տարբեր փուլերը համապատասխանում էին ուրարտական եղանակային-երկրագործական ծիսական համակարգի համապատասխան փուլերի հետ և ուղեկցվում էին տոնակատարություններով ու զոհաբերություններով։ Ուրարտական քրմությունը հոգուտ տաճարների զբաղվում էր առևտրով, ուներ տաճարային հողատարածություններ, մետաղագործական և այլ արհեստանոցներ, ուր, բացի այլևայլ իրերից, պատրաստում էին զենքեր, որոնք համարվում էին սրբագործված ու գերբնական ուժով օժտված[45]։

---

42 УКН, № 25, 27, 65, 275, 281, НУНК, I.

43 УКН, № 25, стрк. 8—10.

44 Տե՛ս Լ. Խ. Վանի թագավորությունը. Թիֆլիս, 1915, էջ 131։

45 Г. А. Меликишвили. Наири—Урарту, с. 333, 334, 355.

Ուրարտական քրմությունը ծանոթ էր և ուսումնասիրում էր հարևան ժողովուրդների հոգևոր կյանքը, քանի որ նրանք էին նվաճված ժողովուրդների պաշտամունքային պատկերացումները միահյուսում պետական կրոնին՝ ղեկավարվելով երկրի կրոնական քաղաքականության սկզբունքներով։ Պիտի ենթադրել, թերևս, որ քրմության իրավասության ներքո էին նաև ուրարտական դպրոցները, և նրանք են ստեղծել ուրարտերեն սեպագիրը։

Սեսերը։ Ուրարտական ծիսական համակարգի մասին տվյալները սակավաթիվ են ու կցկտուր։ Ուրարտական ծեսերի մասին որոշ տվյալներ կան արձանագրություններում, որոշ տվյալներ էլ կարելի է քաղել քննելով հնագիտական նյութը։ Այդ իսկ պատճառով հնարավոր է միայն շատ ընդհանուր գծերով վերականգնել ուրարտական որոշ ծիսական արարողությունների ընթացքը։

Թագադրության ծեսը։ Ուրարտացու պատկերացմամբ իշխանությունը աստվածային ծագում ուներ և տրվում էր Խալդեի կողմից։ Ուրարտուի արքաները հաճախ են նշում, որ Խալդեն է իրենց արքայություն տվել։ Ինչպես օրինակ. «...Երբ Խալդև աստվածն Արգիշթե Մինուաորդուն արքայություն տվեց, բազմեց նա իր հոր տեղը (գահին)»[46]. «Սարդուրե Արգիշթորդին ասում է. երբ Խալդև աստվածն ինձ արքայություն տվեց, ես բազմեցի հորս արքայական տեղը (գահին)»[47]. «Խալդե աստծու մեծությամբ տիրական, Արգիշթե Ռուսաորդին, ծառան Խալդե աստծու ասում է. Խալդե աստծու զորությամբ տիրական..., որն ինձ հանձնեց (՞) կարգադրությունները (օրենքնե՞րը), որը ինձ տվեց թագավորություն հզոր, բազմեցի ես արքայական դահին... (Խալդեն) հաստատեց ինձ (համա՞ր) ծառ արքայական...»[48]։ Այդ իսկ պատճառով Ուրարտուի արքաները թագադրվում էին Խալդե աստծու պաշտամունքային կենտրոնում՝ Մուծածիրում[49]։ Եթե Մուծածիրը անկախ էր կամ ենթարկվում էր Ասորեստանին, այն նախ և առաջ նվաճվում էր (այդպես են վարվել Մինուա և Իշպուինե արքաները, երբ թագադրվում էր Մինուան, այդպես է վարվել նաև Ռուսա I-ը իր թագադրության նախօրյակին)[50]։

Գալով Մուծածիր[51] գահաժառանգը կառուցում էր նոր տաճարներ[52] (թերևս Խալդև աստծուն ձոնված համաչերում) և նվերներ էր տալիս նորակառույց տաճարներին (մատուցվում էին տարբեր իրեր, լինի զենք, անոթներ, թե զարդ, ինչպես նաև մեծ թվով խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, որոնց մի մասը նախատեսված էր զոհաբերության, իսկ մյուս մասը՝ վաճառքի համար)[53]։

Այնուհետև տաճարում կատարվում էր թագադրությունը (հնարավոր է նաև արքայի աստվածացման արարողությունը). նրա գլխին էին դնում թագը և տալիս էին կրելու ուրարտական թագավորի գայիսոնը։ Արարողությանը մասնակ-

---

46 УКН, № 128 АЗ, стрк. 17—19.

47 УКН, № 156 AII+AI, стрк. 25—31.

48 УКН, № 276, лиц. стор.. стрк. 16—34.

49 АВНИУ, № 49, прим. 85.

50 Ուրարտական արքաների թագադրության մասին սկզբնաղբյուրները հիմնականում երեքն են՝ Մինուա և Իշպուինե արքաների Կելիշինի արձանագրությունը (УКН, № 19), Ռուսա I արքայի Թոփուզավայի արձանագրությունը (УКН, № 264) և Սարգոն II արքայի՝ մ. թ. ա. 714 թ. արշավանքը նկարագրող սեպագիրը (АВНИУ, № 49), որը շատ մանրամասներով համընկնում է Թոփուզավայի արձանագրության տվյալների հետ (տե՛ս Լ. Ն. Թիլագով. Ուրարտական արքաների թագադրման արարողության մասին.—«Աշխատություններ» ՀՊՊԹ, հ. VII, Երևան, 1981, էջ 24—27)։

51 Արամե, Սարդուրե I, Իշպուինե և Ռուսա I-ին հաջորդած արքաները, որոնք չէին կարող գրավել Մուծածիրը, ամենայն հավանականությամբ թագադրվել են Խալդեին ձոնված մի այլ տաճարում. հնարավոր է, որ Արամեն և Սարդուրե I-ը թագադրվել են Արծաշքու քաղաքում, իսկ մյուսները՝ Տուշպայում։

52 УКН, № 19, урарт. текст, стрк. 1—7.

53 УКН, № 19, урарт. текст, стрк. 7—36.

ցում էր ժողովուրդը[54], բոլորը բարձրաձայն կանչում էին նոր արքայի անունը[55], Խալդեի տաճարի քուրմը նրա առջև (ինչպես աստծու) և աստվածների առջև զոհեր էր մատուցում[56]։ Տաճարում դրվում էր նրա արձանը։ Նորընծա արքան կառուցում էր նոր տաճար, մատուցում զոհեր աստծուն ու (որպես արքա) կատարում էր իր անդրանիկ արշավանքը[57]։ Արշավանքից ու արքայի անդրանիկ հաղթանակից հետո քաղաքով մեկ տոն էր հայտարարվում. որի ծախքերը հոգում էր արքան՝ դրանք դիտելով որպես զոհաբերություն Խալդե աստծուն[58]։

Արշավանքի հետ կապված ծեսեր։ Ամեն մի արշավանք սկսվում էր արտաբողությամբ՝ ձոնված Ուրարտուի աստվածություններին, որի ժամանակ արքան աղոթքով դիմում էր Խալդեին, Թեյշեբային, Շիվինեին և մյուսներին, բարձրաձայն հայտարարելով արշավանքի ուղղությունն ու նպատակը, խնդրելով նրանց հովանավորությունը գործն իր նպատակին հասցնելու համար[59]։ Այնուհետև հնչում էր ռազմակոչը՝ «Խալդեն զորեղ է, Խալդե աստծու զենքը զորեղ է»[60], և բանակը շարժվում էր առաջ. բանակի առջևից տանում էին դրոշը, որը ներկայացնում էր Խալդեին[61]։ Արշավանքն ավարտվելուց հետո հաղթանակած բանակը վերադառնում էր Տուշպա։ Արքան բարձրաձայն, Խալդեի տաճարում (նրան ձոնված կոթողի կամ որմնախորշի առջև) զեկուցում էր կատարված արշավանքի արդյունքների մասին և հաղթանակը ձոնում Խալդեին, արքայի խոս-

---

54 Թոփուզավայի արձանագրությունում Ռուսայի թագադրության ժամանակ չի հիշատակվում Արդինեցիների ներկայության մասին, սակայն նրանց ներկայությունը կարելի է ենթադրել, որովհետև երբ Ռուսա արքան թագադրում է Ուրզանային, մատնանշում է, որ այդ արարողությունը կատարվել է ժողովրդի ներկայությամբ (տե՛ս УКН, № 19, урарт. текст, стрк. 21)։

55 АВИНУ, № 49 (309).

56 УКН, № 19, урарт. текст, стрк. 10—13.

57 УКН, № 19, урарт. текст, стрк. 13—18.

58 Թերևս այդպես կարելի է հասկանալ Թոփուզավայի արձանագրության հետևյալ հատվածը. «Կատարածս զոհաբերությունները լրիվ ես տվեցի Արդինե քաղաքին. Արդինե քաղաքի բնակիչների համար ես տոն կազմակերպեցի» (տե՛ս УКН, № 19, урарт. текст, стрк. 22—23)։

59 Տե՛ս, օրինակ, Արգիշթե I-ի տարեգրությունում. «Աղոթքով դիմեցի ես Խալդե աստծուն, տիրոջը, Թեյշեբա աստծուն, Շիվինե աստծուն, բոլոր աստվածներին Բիա-իսելի (նրա համար) ինչ ուզում էի (անել) տիրական մեծությամբ։ Լսեցին (խնդիրքս) աստվածները» (տե՛ս УКН, № 127, II, стрк. 8—10, I, стрк. 3—4, II, стрк. 38—40, III, стрк. 2—3, 26—28, 50—52, VI, стрк. 2—4; № 128, A1, стрк. 23—27 և այլուր)։

60 Տե՛ս, օրինակ, УКН, № 20, лиц. стор., стрк. 22—23, обр. стор., стрк. 7—8; № 22, стрк. 7—8; № 23, стрк. 2; № 24, стрк. 37—38; № 28, верх. стор., стрк. 2, № 30, стрк. 4—5; № 36, стрк. 3—4։ Արգիշթե I արքայի տարեգրությունում այս ռազմակոչը երբեմն անմիջապես հաջորդում է աղոթքի բանաձևին (տե՛ս, օրինակ, УКН, № 127, III, стрк. 4, 29, 54)։

61 Հ. Ա. Մարտիրոսյանի կարծիքով, Նոր Արեշի կոլումբարիում գտված դոտիներից մեկի վրա պատկերված է արքայական գնդի հանդիսավոր երթը. համաձայն այդ տվյալների՝ առջևից գնացել են նետաձիգները, այնուհետև նիզակավորները, ապա՝ հեծելազորը։ Գոտու վրա չի պահպանված, սակայն գնդի առջևից, ամենայն հավանականությամբ, ընթացել է արքայի ռազմակառքը (А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 249)։ Ըստ երևույթին, հենց այս ռազմակառքի վրա է ամրացված եղել դրոշը։ Այս դրոշի գոյության մասին է վկայում «Խալդե աստվածն առաջնորդում էր» դարձվածը, որը արձանագրություններում երբեմն հաջորդում է աղոթքի բանաձևին կամ ռազմակոչին (տե՛ս, օրինակ, УКН, № 127, I, стрк. 20, II, стрк. 12, 29; № 128, B1, стрк. 32, A2, стрк. 9), երբեմն նաև՝ սովորաբար արշավանքի նկարագրությանը նախորդող «Խալդե աստվածը ելավ (արշավանքի) իր զենքով (զենքում)» դարձվածքին (տե՛ս, օրինակ, УКН, № 20, стрк. 16—17; № 30, стрк. 1; № 36, стрк. 1; № 131, стрк. 1; № 127, I, стрк. 17; № 155, стрк. 1; № 161, стрк. 1 և այլն)։

քր արձանագրվում էր քարի վրա[62]։ Հնարավոր է, որ այնուհետև կատարվել են զոհաբերություններ ու տոն է հայտարարվել։

Թաղման ծեսը։ Ուրարտական թաղման ծեսի մասին գրավոր աղբյուրներում որևէ տվյալ չկա։ Պետք է ենթադրել, որ թաղման ծեսը համապատասխանել է մահվան մասին ուրարտացիների ունեցած պատկերացմանը, ըստ որի մարդու մահվանից հետո շարունակում է գոյատևել նրա հոգին, որը տեղափոխվում է այս աշխարհից մյուսը։ Այդ մասին է վկայում «հոգիներ տեղափոխող աստծուս պաշտամունքի գոյությունը Ուրարտուում։ Այս առումով ուշագրավ է, որ ուրարտական կոլումբարիներում պեղված դիանոթների վրա, կավանոթի ուսին լինում են անցքեր։ Այս հանգամանքը հիմք է տվել Բ. Ա. Կուֆտինին եզրակացնելու, որ ուրարտացիների պատկերացմամբ հոգին անմիջապես չի լքում հանգուցյալին (նույնիսկ դիակի մոխրանալուց հետո) և կարիք ունի հաղորդակցվելու արտաքին աշխարհի և, մասնավորապես, դամբարանում դրված իրերի հետ[63]։

Ուրարտուում կանոնիկ էր համարվում, թերևս, ժայռափոր դամբարաններում մահացածին թաղելու սովորությունը, քանի որ, ինչպես ենթադրվում է, նուման դամբարաններում (որոնք կազմված էին լինում մի քանի սրահներից) են դրվել արքաների ու ազնվականների աճյունները[64], իրենց հագուստով, զենքով, զարդերով ու կատարված զոհաբերություններով։

Ժայռափոր դամբարաններ են Վանի ժայռում փորված կառույցները[65], Հ. Ա. Մարտիրոսյանի կարծիքով, նման ժայռափոր դամբարաններ կարող են եղած լինել Արգիշթեխինելե քաղաքի բազմաթիվ անձավներն ու Թեյշեբաինեի դիմաց, Հրազդանի կիրճում եղած որոշ այրեր։ Նման անձավ-դամբարաններ են հայտնի նաև Բոստանկայա, Կայալիդերե ուրարտական հնավայրերում[66]։ 1979 թ. ուրարտական մի ժայռափոր դամբարան (բավականին հարուստ դամբարանությամբ) բացվեց Սևանա լճի մոտ, Սարուխան գյուղում։

Կանոնիկ թաղումներ պիտի համարել նաև Արշակունի հայ արքաների նստավայր Ճմին (Զրմես) քաղաքի տարածքից 4 կմ հարավ, Երզնկայի դաշտի վրա իշխող, այժմ Ալթինթեփե անվանված բլրի վրա հիմնված ուրարտական քաղաքում 1938 թ. պատահաբար բացված 3 դամբարանները։ Սրանք ունեցել են դրոմոս, պատերին՝ որմնախորշեր։ Ենթադրվում է, որ երկհարկ են եղել։ Ծածկվել են սալաքարերով, որոնց վրա լցված հողի հաստ շերտը ծեփվել է կավով և այդ պատճառով աննշմարելի են աչքի համար։ Ճմինի դամբարաններում դրված է եղել հարուստ դամբանանյութ։ Գտնվել են զարդեր, բրոնզե ու երկաթե զենքեր, կահույք և այլն։ Ենթադրվում է, որ դրանք ուրարտական ազնվականների և բարձրաստիճան պաշտոնյաների ու մեծահարուստների գերեզմաններ են։ Ճմինի դամբարաններից մեկում (բաղկացած 3 սրահներից), ուղիղ անկյան տակ դրված են եղել երկու սարկոֆագ։ Այստեղ գտնվել են նաև դիանոթներ. այսինքն՝ ակնառու է, որ դամբարանում թաղումներ են կատարվել երկու տարբեր ծեսերով՝ դիաթաղում և դիակիզում[67]։ Այս երևույթը դիտվել է

---

62 Այս մասին է վկայում արձանագրություններում (տարեգրություններում նախորդ տարվա ընթացքում կատարված իրադարձությունները նկարագրող հատվածն ավարտող «խալդե աստծու համար այս մեծագործությունները մեկ տարում կատարեցի» արտահայտությունը (УКН, № 127. I, стрк. 17, II, стрк 24, 50, III, стрк. 17, 45; № 155, G, стрк. 18, B, стрк. 52—55)։

63 Б. А. Куфтин. Урартский «колумбарий» у подошвы Арарата и куро-аракский энеолит.—Вестник музея Грузии, вып. XIII-B, Тбилиси, 1944, с. 69—70.

64 Б. Б. Пиотровский. Ванское царство, с. 216—218.

65 Նույն տեղում։

66 А. А. Мартиросян. Аргиштихинили, с. 53.

67 B. Ögün. Die urartäischen Bestattungsbrauche.—Studien zur Religion und Kultur Kleinasien. Festschrift für Friedrich Karl Dörner zum 65. Geburtstag am 28. Februar, 1976, herausgegeben von S. Şahin, E. Schwertheim, J. Wagner. Zweiter Band, 1978, S. 675—676.

նաև Պատնոցից 20 կմ հեռու գտնվող Դեգելիի դամբարանադաշտի ժայռափոր դամբարաններից մեկում և Վանա լճի հյուսիսային ափին գտնվող Լիճի դամբարանադաշտի դամբանախցերից մեկում[68]։ Իգդիրի կոլումբարիում, դիակիզումը կատարված թաղումների կողքին, պեղվել է դամբարան՝ մոր ու երկու երեխաների դիաթաղմամբ։ Բ. Ա. Կուֆտինի կարծիքով սա տեղացի մի կնոջ և նրա երեխաների գերեզմանն է, այդ կինը ամուսնացած է եղել եկվորի հետ և մահվանից հետո նրան ու երեխաներին թաղել են իր ժողովրդի սովորույթով[69]։ Այս հանգամանքը վկայում է, որ դիակիզման ծեսը մ. թ. ա. VIII—VII դդ. խորթ է եղել տեղացիների համար։

Արգիշթեխինելեում, քաղաքի արևմտյան թաղամասի շինությունների տակ, պեղվել են մի շարք կարասային թաղումներ ու թաղումներ կճուճներում, որոնցում սովորաբար լցված են լինում հանգուցյալի այրված կամ մասնատված դիակի մնացորդները։ Ինչպես ցույց է տվել Իգդիրի կոլումբարիի ուսումնասիրությունը, հանգուցյալին սովորաբար այրել են իր հագուստով ու զարդերով։ Արգիշթեխինելեի գերեզմաններն ունեն աղքատիկ դամբանություն և ինչպես ենթադրվում է, պատկանել են քաղաքը կառուցող մշակներին, որոնք, ըստ Հ. Ա. Մարտիրոսյանի, եղել են գերիներ և ստրուկներ (բիայնացիներ կամ ուազացիներ չեն) և, ամենայն հավանականությամբ, վերաբնակեցվել են այստեղ Արգիշթե I-ի կողմից «Խաթե» և «Ծուպա» երկրներից։ Արգիշթեխինելեի այս դամբարանադաշտը գործել է Արգիշթե I-ի թագավորության տարիներին, այնուհետև նրա վրա հիմնվել է քաղաքի մի նոր թաղամաս[70]։ Այստեղ դիտվող դիակիզման ծեսը փորձել բացատրել այն հանգամանքով, թե այդպես թաղվել են հասարակության ստորին խավի ներկայացուցիչները, թերևս, չի կարելի, քանի որ դիակիզումն ինքնին բավական մեծ ծախս պահանջող արարողություն էր և, բացի այդ, Իգդիրի, Նոր Արեշի, Երևանի կոլումբարիներում հայտնաբերվել է ուրարտական ժամանակաշրջանի բավական հարուստ դամբանություն[71]։ Հետևաբար, այսպիսի դամբարաններ կարող էին ունենալ հասարակական բարձր դիրք ունեցող անձինք, որոնք, սակայն, բիայնացիներ չէին։ Արեվելյան Հայաստանի գրված տարածքում ուրարտական ժամանակաշրջանում հարատևած թաղման տեղական (դիաթաղում), ավանդական ձևերի գոյության մասին են վկայում 1951 թ. Թալինի շրջանի Հակկո գյուղում բացված քարարկղային, ուրարտական բնորոշ նյութ պարունակող[72], ինչպես նաև 1983—1984 թթ. Սևանա լճի մոտ, Սարուխան գյուղում պեղված համանման դամբարանները[73]։ Ուրարտական նյութ պարունակող մի քարարկղ է պեղել Հ. Հ. Մնացականյանը Կարճաղբյուրի դամբարանադաշտում։ Մի այլ քարարկղ հետաղոտել է Գ. Թումանյանը Գուսանագյուղում։ Մի շարք քարարկղային ու սալարկղային, տեղական հարուստ և ուրարտական դամբանությամբ գերեզմաններ են պեղվել

---

68 Այս, ինչպես և Արևմտյան Հայաստանում պեղված կամ նկարագրված ուրարտական դամբարանների ու դամբարանադաշտերի մասին հանգամանալից տե՛ս նույն տեղում, էջ 639—678, աղ. CLI—CLXV.

69 Б. А. Куфтин. Указ. соч., с. 72.

70 А. А. Мартиросян. Аргиштихинили, с. 53.

71 Б. А. Куфтин. Указ. соч.; Հ. Մարտիրոսյան, Հ. Մնացականյան. Նոր Արեշի ուրարտական կոլումբարին.—ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 10, էջ 65—71։ Մալաքլուում դիանոթները իջեցված են ժայռերի ճեղքերում սարքված դամբարաններ, Երևանում դիանոթները դրված էին բնակարանի ձևով հարդարված դամբանախցում (Ս. Ա. Ենայան, Լ. Ն. Բիյագով, Ա. Գ. Կանեցյան, Ս. Գ. Հմայակյան. Նորահայտ ուրարտական դամբարան Երևանում.—Հայկական ՍՍՀ-ում 1983—1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան (զեկուցման թեզիսներ), Երևան, 1985 (ԴՀԱ), էջ 28—29)։

72 Б. Б. Пиотровский. Кармир-блур. II, с. 47.

73 Ա. Ս. Փիրիպոսյան. Պեղումներ Կամոյի շրջանի Սարուխան գյուղում.—ԴՀԱ, էջ 23։

Շշականում։ Վերջիններս, ինչպես ենթադրվում է, տեղական վերնախավի ներկայացուցիչներին են պատկանել, որոնք եղել են ուրարտական ծառայության մեջ[74]։

Այս առումով առանձնապես ուշագրավ է Մեծամորում բացված քարարկղային, բնորոշ ու հարուստ ուրարտական նյութ պարունակող դամբարանը (թվագրվում է մ. թ. ա. VIII դարով)։ Է. Վ. Խանգադյանի կարծիքով, այստեղ ակնառու է մարդկային զոհաբերություններ կատարելու հանգամանքը, քանի որ հիմնական թաղման ամբողջական կմախքի հետ բացվել է մարդու երեք գանգ[75]։ Հետաքրքիր է, որ ուրարտական կնիքներից մեկի վրա պատկերված է զոհարան և գլխատված ու մաշկազերծ մարդու դիակ[76]։ Թոփրաքկալեի պեղումների ժամանակ, հնավայրի հատվածներից մեկում գտնվել են մեծ քանակությամբ մարդկանց ու կենդանիների ոսկորներ, որոնց թվում մարդկային գանգեր չեն գտնվել։ Ենթադրվում է, որ այստեղ դրված են եղել Խալդեին զոհաբերված մարդկանց դիակները, որոնց գլուխները պահվել են այլ վայրում[77]։

Հիշատակված այս երեք փաստերը մարդու զոհաբերության ծիսակարգի տարբեր փուլերն են ներկայացնում ու հնարավորություն են տալիս, ճիշտ է, շատ ընդհանուր ձևով, վերականգնելու այդ արարողությունների ընթացքը. 1) զոհը գլխատվում էր ու մաշկազերծվում, 2) գլխատված ու մաշկազերծ դիակը դրվում էր զոհարանին, 3) զոհի գլուխը դրվում էր դամբարանում, հանգուցյալի մոտ, 4) զոհի դիակը վերցվում էր զոհարանից և գրվում զոհերի համար նախատեսված վայրում։

Ուրարտուում մարդկային զոհաբերությունների մասին տվյալները սահմանափակվում են վերոհիշյալներով։ Գրավոր աղբյուրներում այս ծեսի մասին տեղեկություններ չկան և դա այն դեպքում, երբ կան բազմաթիվ արձանագրություններ, որոնցում խոսվում է մահապատիժների, ավերածությունների, գերեվարության ու միաժամանակ նաև աստվածություններին կենդանիների զոհաբերության մասին[78]։ Ուրարտուում կատարվող մարդկային զոհաբերությունների վերաբերյալ տվյալների առկայությունը հնագիտական նյութերում և այս մասին տեղեկությունների իսպառ բացակայությունն արձանագրություններում կարելի է բացատրել, թերևս, այդ զոհաբերությունը կատարելու սովորույթի առկայությամբ երկրում, որը, սակայն, մերժված էր պաշտոնական կրոնի կողմից։

Այսպիսով, Ուրարտուում հայտնի էր թաղման երեք հիմնական ծես. ա) դիաթաղում, բ) դիակիզում, գ) դիամասնատում։

Դիաթաղման ծեսը դիտվում է ութ տարբերակներով. 1) թաղում ձեռակերտ անձավներում. դիակը երբեմն դրված է լինում սարկոֆագի մեջ [Վան, Սարուխան, Բոստանկայա (՞), Կայալիդերև (՞), Լիճ, Մազդերդ, Հրազդանի

---

74 С. А. Есаян. Находки урартских изделий в Ошаканском могильнике.— ДВМК, с. 94--97.

75 Է. Վ. Խանգադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան. Մեծամոր. Երևան, 1973, էջ 175—176, 181, 185։

76 Б. Б. Пиотровский. Ванское царство, с. 230.

77 Նույն տեղում, էջ 223։

78 Աստվածներին, բացի խոշոր ու մանր եղջերավոր անասուններից, զոհաբերում էին գինի։ Հաց. Սարգոն I-ի արձանագրությունում հիշատակվում է մի խոշոր պղնձե կաթսայի մասին, որը «Ուրարտուի արքաները լցնում էին զոհաբերվելիք գինիով» [АВИИУ, № 49 (367)]. Ըստ Երեքույթին, նույն նպատակին է ծառայել նաև Կարմիր բլուրում գտնված, մոտ 1500 լիտր տարողությամբ բրոնզե կաթսան (Ս. Ա. Եսայան. Կարմիր բլուր. Երևան, 1982, էջ 45)։ Սերբարթեիի թիթեղներից մեկի վրա ներկայացված է Խալդեն, որի առջև եռոտանու վրա դրված են նավակաձև հացեր (տե՛ս H.-J. Kellner. Bronzene Weihe-und Votivgaben. Urartu, ein wiederentdeckter rivale Assyriens. Katalog der Ausstellung, München, 1976, S. 52, Abb. 52.

կիրճ (՞), Արգիշթեխինելե (՞), Դեղելի, Արծկե]։ 2) Մեկ կամ մի քանի բաժանմունքներից կազմված դամբարաններում՝ փորված գետնի մեջ և կառուցված քարից. ունեն դրոմոս. դիակը դրվել է սարկոֆագի մեջ (Ճմին)։ 3) Ժայռի ճեղքվածքի մեջ (Իգդիր)։ 4) Սալարկղային դամբարանում (Մեծամոր, Հակկո, Օշական, Արգիշթեխինելե)։ 5) Մեծ, քարարկղային դամբարանախցում (Կարմրաղբյուր, Օշական)։ 6) Քարարկղ հիշեցնող դամբարանախցում, կառուցված չքրծված աղյուսներից (Արգիշթեխինելե)[79]։ 7) Հիմնահողային թաղում (Լիճ)։ 8) Կարասային թաղում (Արգիշթեխինելե)։

Դիակիզման ծեսը հայտնի է հինգ տարբերակներով. 1) դիանոթը թաղված է ժայռի ճեղքվածքում (Իգդիր)։ 2) Դիանոթը թաղված է հողի մեջ (Նոր Արեշ, Արգիշթեխինելե)։ 3) Դիանոթը դրված է դրոմոս ունեցող մեկ կամ մի քանի բաժանմունքներից կազմված դամբանախցում (Զրմես, Երևան, Լիճ, Արծկե, Դեղելի)։ 4) Դիանոթը դրված է ձեռակերտ անձավում (Արծկե, Ալիշար)։ 5) Դիանոթը թաղված է սալարկղային դամբարանում (Լիճ)։

Դիամասնատման ծեսը հայտնի է երեք տարբերակներով. 1) դիանոթը դրված է քարե դագաղի մեջ (Արգիշթեխինելե)[80]։ 2) Դիանոթը դրված է սալարկղային դամբարանում (Արգիշթեխինելե)։ 3) Դիանոթը թաղված է հողում։ (Արգիշթեխինելե)։

Այս ժամանակաշրջանում բիայնական վերնախավի համար բնորոշ էին. թերևս, թաղման առաջին և երկրորդ ձևերը (դիաթաղում անձավներում և կամ խնամքով կառուցված մեկ կամ մի քանի բաժանմունքներից կազմված, դրոմոս ունեցող դամբարաններում)։ Արևմուտքից եկած բնակչության, մասնավորապես արևելյան մուշքերի համար բնորոշ էր, թերևս, դիակիզումը, քանի որ Արարատյան դաշտում և Զիուկունե երկրում (Վանա լճի հյուսիսային ափ), վայրերի, որտեղ հայտնաբերված են դիակիզում պարունակող գրեթե բոլոր հիշատակված դամբարանները, մ. թ. ա. VIII—VII դդ. առաջին կեսից կային արևելյան մուշքեր, ինչպես նաև «խաթե» երկրից եկած հոծ բնակչություն[81]։ Դիամասնատմամբ թաղումներ հայտնի են միայն Արարատյան դաշտում։ Այս դամբարանները կարող էին պատկանել ինչպես տեղական մի ցեղի (նման թաղումներ հայտնի են Արարատյան դաշտում և վաղ երկաթի դարում), այնպես էլ Արգիշթե I-ի կողմից արևելքից բերված բնակչության ներկայացուցիչներին։ Քարարկղային և սալարկղային դիաթաղմամբ դամբարանները, որոնք ավանդական թաղման ձև են եղել Արարատյան դաշտում և շրջակայքում, անկասկած պատկանել են տեղաբնիկներին։

Թաղման ծեսի և ձևերի այս բազմազանությունը վկայում է, որ Ուրարտուում ապրող ժողովուրդները, չնայած պետական կրոնի առկայությանը երկրում, պահպանում էին իրենց հատուկ պատկերացումները հանդերձյալ կյանքի մասին։ Հանգամանք, որ իր զուգահեռն է գտնում Մհերի դռան արձանագրու-

---

79 Այս դամբարանը պեղել և ուսումնասիրել են Հ. Ա. Մարտիրոսյանն ու Ռ. Մ. Թորոսյանը։

80 Այս դամբարանը պեղել և ուսումնասիրել են Հ. Ա. Մարտիրոսյանն ու Ռ. Մ. Թորոսյանը. նյութերը հանձնված են հրատարակության։

81 Արարատյան դաշտում բնակեցված էր «խաթեից» և «Նուպայից» բերված բնակչություն, մ. թ. ա. VIII դ. սկսած, իսկ Վանա լճից հյուսիս ընկած տարածքում (ուրարտ. Զիուկունե երկիրը), որտեղ գտնվում են Արծկեի, Դեղելիի և Լիճի դամբարանադաշտերը, մ. թ. ա. VII դ. II քառորդից սկսած արդեն ապրում էին արևելյան մուշքեր և «խաթեցիներ» (տե՛ս УКН, № 278 և ծան. 3, 4)։ Որ արևելյան մուշքերին բնորոշ էր դիակիզման ծեսը, անուղղակի կերպով վկայում է հետևյալ հանգամանքը. մ. թ. ա. մոտ 1000 թ. Կարքեմիշում, ինչ-որ կատակլիզմից հետո ավանդական դիաթաղման ծեսի փոխարեն տարածում է ստանում դիակիզումը (Б. А. Куфтин. Указ. соч., с. 71)։ Կարքեմիշը մ. թ. ա. XI դարի վերջում—X դարի սկզբին նվաճվել է արևելյան մուշքերի կողմից (И. М. Дьяконов. Предыстория армянского народа, с. 215, прим. 63, с. 228)։ Հնարավոր է, որ թաղման ծեսի վերոհիշյալ փոփոխությունը կապված է հենց այս ներխուժման հետ։

թյունում, ուր հիշատակված են նաև բիայնական ծագում չունեցող բազմաթիվ դիցանուններ։

Երկրագործական-եղանակային ծեսեր։ Այս ծեսերի կարգի ու ժամանակի մասին տվյալներ կան Մհերի դռան արձանագրությունում, որի վերջում ասվում է. «Իշպուինե Սարդուրորդին (և) Մինուա Իշպուինորդին ապարանք (՞) նոր հիմնեցին, հաստատեցին կարդ. երբ ծառերը (ճյուղերը խաղողենու) էտվեն[82] (՞) խալդե աստծուն 3 խոյ[83] թող զոհաբերվի, 3 խոյ՝ աստվածներին բոլոր. երբ խաղողուտը կառուցվի (՞) [խչմարվի (՞)][84] 3 խոյ խալդե աստծուն թող զոհաբերվի, 3 խոյ՝ աստվածներին բոլոր. երբ խաղողուտը [խաղողուտի բերքը (՞)] հավաքվի[85], խալդե աստծուն 3 խոյ թող զոհաբերվի, 3 խոյ աստվածներին բոլոր։ Այստեղ հիշատակված են տարվա ընթացքում կատարվելիք երեք տոնակատարությունները՝ կապված այգեգործական աշխատանքների համապատասխան փուլերի հետ։ Առաջին տոնը կարգադրվում է տնցկացնել խաղողուտի էտից հետո։ Խաղողի որթի էտը Հայաստանում սկըսվում է մարտ ամսի վերջին տասնօրյակում և ավարտվում ապրիլի առաջին կեսում։ Այս ժամանակ Հայաստանում նշվում էր բարեկենդանի տոնը (տոնվում էր մարտ ամսին և տևում 1—2 շաբաթ), կապված նոր տարվա գալստյան հետ[86]։

Ամենայն հավանականությամբ Մհերի դռան արձանագրությունը հիմնադրվել է այս տոնի կապակցությամբ. տոն, որն ըստ այդ արձանագրության տվյալների կատարվել է «արևի (Շիվինեի) ամսին» (^{D}UTU ITU) և այդ ժամանակ է կարգադրվում զոհեր մատուցել Ուրարտուի բոլոր աստվածություններին ու «սրբություններին»։ Ֆ. Վ. Քյոնիգի կարծիքով, ուրարտական

---

82 «Էտվեն» ui aldine gudule (УКН, № 27, стрк. 29, 90)։ Այստեղ խոսքը թերևս այգեգործական աշխատանքի որոշակի փուլի մասին է, որի ավարտից հետո պիտի արվեն զոհաբերություններ։ Այս առումով առաջին, կարևոր գործը, որ արվում էր, խաղողի այգու էտն էր։ Քանի որ այժմ հաստատապես հայտնի չէ ո՛չ aldine և ո՛չ էլ gudule բառերի նշանակությունը, այլ հայտնի է միայն ui ժխտական մասնիկի իմաստը, ապա այս հասկացությունը թերևս կարելի է թարգմանել «անպետքը[՞ (ավելորդը)] ոչնչացվի (՞)» ձևով, իսկ ամբողջ դարձվածքը՝ «երբ ծառերը էտվեն (՞)» կամ «երբ ավելորդ (՞) ճյուղերը (՞) կտրվեն (՞)» ձևով։

83 «Խոյ» UDU (УКН, № 27, стрк. 31), այստեղ և այլուր, Մհերի դռան արձանագրության քննությանը անդրադարձած ուսումնասիրողների մոտ՝ «ոչխար»։ Այժմ ընդունված կարծիք է, որ Ուրարտուում աստվածներին զոհաբերել են որձ կենդանիներ, իսկ աստվածուհիներին՝ կովեր (Г. А. Меликишвили. Наири—Урарту, с. 370)։ Սակայն պետք է ենթադրել, որ Ուրարտուում աստվածներին ընդհանրապես զոհաբերել են որձ կենդանիներ, իսկ աստվածուհիներին՝ էգ, ինչպես, օրինակ, նախաքրիստոնեական Հայաստանում էր (Ղևոնդ Ալիշան. Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց. Վենետիկ—Սուրբ Ղազար, 1895, էջ 455) և հեթիթական աշխարհում։ Այսինքն, Մհերի դռան և պաշտամունքային բնույթի այլ արձանագրություններում UDU՝ «ոչխար եզներավոր անասուն»—«ոչխար» գաղափարագիրը, եթե խոսքը աստվածներին զոհ մատուցելու մասին է, պետք է թարգմանել «խոյ» ձևով, իսկ երբ դիցուհիներին զոհ մատուցելու մասին՝ «ոչխար» ձևով։

84 «Կառուցվի» (՞), «խչմարվի» (՞) tanule (УКН. № 27, стрк. 30). tanule բառի հիմքը թերևս tan- «կառուցել» բառն է (տե՛ս УПД. с. 91)։ Այս դեպքում tanule հասկացությունը կարելի է թարգմանել «կառուցվի» ձևով։ Մայիս ամսին խաղողի վաղերը խչմարվում էին՝ ճյուղերը բարձրացվում էին հենակների վրա, և խչմարված խաղողուտն իսկապես նմանվում էր «կառուցված այգու»։

85 «Հավաքվի» mesule (УКН, № 27, с. 30). բառը կազմված է meš- «հավաքել» հիմքից (Ն. Գ. Ադոնց. Նշվ. աշխ., էջ 226, ծան. 1։ УПД. с. 89)։ Հետևաբար պիտի ենթադրել, որ այստեղ խոսքը բերքահավաքի և բերքահավաքի հետ կապված արարողությունների մասին է [հմմտ. Ֆ. Վ. Քյոնիգի թարգմանությունը (HChI, № 9, S. 56)]։

86 Ա. Ա. Օդաբաշյան. Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում.—«Հայ ազգագրություն և բանահյուսություն», № 9, Երևան, 1978, էջ 9, 24—26։

«արևի ամիսը» համապատասխանել է մարտին։ Այս առումով ուշագրավ է, որ հայոց տոմարում մարտ ամիսը ձոնված էր արևին և կոչվում էր արեգ («արեի ամիսն» ու արեգ ամիսը առաջին անգամ համադրել է Հ. Հ. Կարագյոզյանը)։ Այժմ արդեն ընդունված կարծիք է, որ ամանորյա տոնը հին Հայաստանում նշվել է արեգ (մարտ) ամսին, գարնանային օրահավասարին[87]։ Ամենայն հավանականությամբ այդպես է եղել նաև Ուրարտուում[88], ուր տարվա առաջին՝ «Շիվինեի ամսին» կատարվող տոնը նշել է նոր տարվա ու տնտեսական տարվա սկիզբն ու բնության զարթոնքը։

Արժանահիշատակ է, որ Մհերի դռան արձանագրությունում կարգադրված է Խալդե աստծուն Արեի ամսին զոհաբերել և 6 ուլ՝ VI UDU MAŠ.-TUR ^{D}Ḫaldie nipsidi'aale[89]։ Ուրարտական արձանագրություններում կենդանիների զոհաբերությունների մասին խոսելիս սովորաբար օգտագործվում է urpu— «զոհարերելը» բայը, և միայն այն դեպքում, երբ խոսքը ուլերի զոհաբերության մասին է՝ nipsidu բայը։ Գ. Ա. Մելիքիշվիլին այն թարգմանում է «մորթել», Հ. Հ. Կարագյոզյանը՝ «ողջակիզել», Ֆ. Վ. Ջոնիգը՝ «պատառոտել» ձևով։ Մատղաշ կենդանիներին զոհաբերելու այս ձևի մասին կարելի է վերջնական եզրակացության հանգել՝ քննելով Կարմիր բլուրի պեղումներից հայտնի որոշ տվյալներ։ Կարմիր բլուրի № 26 սենյակը, որը կից էր № 25՝ զոհասեղանով սրահին, լցված է եղել մեծ քանակությամբ, ընդամենը մի քանի օրական զոհաբերված խոշոր ու մանր եղջերավոր կենդանիների այրված ոսկորներով, ընդ որում բացակայել են գանգի և վերջավորությունների այն ոսկորները, որոնք կենդանուն մաշկազերծելուց հետո մնում են մորթու վրա[90]։ Այսինքն՝ Մհերի դռան արձանագրության հիշատակված հատվածում խոսքը նորածին կենդանուն մաշկազերծ անելու և հետո միայն այրելու մասին է։ Հայտնի է, որ այծերը ծնում են փետրվար-մարտ ամիսներին, հետևաբար նորածին ուլեր կարող էին զոհաբերվել միայն փետրվարի վերջ—մարտ ժամանակամիջոցին, այսինքն՝ «արևի ամիսը» իսկապես համապատասխանել է մարտին։ Հանգամանք, որ ինքնին վկայում է այն մասին, որ Մհերի դռան արձանագրությունը փորագրվել է IX դարի վերջին տասնամյակի տարիներից մեկում (Իշպուինե և Մինուա արքաների համատեղ գահակալության ժամանակ), մարտ ամսին, գարնանամուտի և տարեմուտի տոնի կապակցությամբ։

Մհերի դռան արձանագրությունում հիշատակված հաջորդ տոնը համապատասխանել է խաղողի այգու մշակման երկրորդ փուլի՝ խաղողուտի խըշմարման աշխատանքի կատարման ժամանակի հետ։ Խաղողուտը Հայաստանում խշմարվում էր մայիս ամսին, հետևաբար պիտի ենթադրել, որ ուրարտական այս տոնը ևս կատարվել է մայիսին։ Հայաստանում մայիսին էր կատարվում համբարձման տոնը, որը չնայած իր քրիստոնեական բնութագրին, ունի շատ ավելի հին արմատներ, այն ջրի ու ծաղկի տոն է եղել և հետաքրքիր է, որ Վանա լճի շրջակայքում այն առնչվում էր Մհերի դռան պաշտամունքի հետ[91]։

Մհերի դռան արձանագրությունում հիշատակված երրորդ տոնն առնչվել է խաղողի հասնելու և բերքահավաքի հետ։ Խաղողը Հայաստանում հասնում ու հավաքվում է օգոստոս ամսից սկսած։ Բերքահավաքի ու տնտեսական տարվա ավարտը նշող հին հայկական տոնը կատարվում էր հայոց նավասարդ (օգոստոս-սեպտեմբեր) ամսին (Հայաստանում, համեմատաբար ավելի ուշ շրջա-

---

87 Ղևոնդ Ալիշան. նշվ. աշխ., էջ 139։ Ա. Ա. Օդաբաշյան. նշվ. աշխ., էջ 12—16։

88 Հեթիթական աշխարհում ևս, որը գրավում էր Ուրարտուին նման բնակլիմայական պայմաններով տարածք, նոր տարվա գայուստը նշվում էր գարնանը. ամանորյա տոնն այստեղ կրում էր Վուրուլիա անունը (В. Г. Ардзинба. Указ. соч., с. 7)։

89 УКН, № 27, стрк. 3, 35.

90 Б. Б. Пиотровский. Кармир-блур II, с. 21—23.

91 Ս. Արեղյան. Հայ ժողովրդական հավատքը.—Երկեր, հ. է, Երևան, 1975, էջ 54—58։

նում, այս ժամանակ էր տոնվում նոր տարին)։ Այս տոնի արարողություններից մեկը խաղողօրհնեքն էր, ծես, որը կատարվում էր Աստվածածնի տոնին (օգոստոս) և միայն սրանից հետո էր թույլատրվում վաճառել կամ օգտագործել խաղողը[92]։

Բացի Մհերի դռան արձանագրությունից, ուրարտական երեք այլ սեպագրերում ևս վկայություններ կան երկրագործական-եղանակային տոների մասին. խոսքը Մինուա արքայի՝ Գյուղակի, Արգիշթե II արքայի՝ Արճեշից ոչ հեռու գտնված և Ռուսա II արքայի՝ Զվարթնոցի արձանագրությունների մասին է։

Գյուղակի արձանագրությունում. «Մինուան ասում է.— երբ խաղողուտը (խաղողի բերքը) հասնի (՞), ցուլ (և) 3 խոյ թող զոհաբերվի Խալդե աստծուն (և) արարողություններ թող կատարվեն ինչպես Խալդե աստծու դարպասների, այնպես էլ կոթողի առջև։ Երբ խաղողը հավաքվի (՞), տոն (՞) թող կազմակերպվի Խալդե աստծու դարպասների մոտ, տոն (՞) Ուարուրաինե դիցուհուն, տոն (՞)՝ Խալդե աստծուն, կոթողի առջև»։

Այստեղ անկասկած խոսքը Մհերի դռան արձանագրությունում երրորդը հիշատակված տոնի սկզբի (բերքահավաքի սկիզբը նշանակող) և ավարտի (բերքահավաքի ավարտը նշանակող) մասին է։

Զվարթնոցի և Արճեշի արձանագրություններում նույնպես խոսք կա երկրագործության հետ կապված ծիսական արարողությունների մասին, այս անգամ արդեն նկատի ունենալով ոռոգման հետ կապված աշխատանքների առանձին փուլերը։ Սակայն այս արձանագրությունների համապատասխան հատվածները ստույգ թարգմանություն չունեն, այդ իսկ պատճառով, կարելի է ենթադրել միայն, որ խոսքը Մհերի դռան արձանագրությունում հիշատակված ծիսական արարողությունների երկրորդ՝ բերքահավաքին նախորդող փուլի մասին է, որի ժամանակ էին կատարվում ոռոգման աշխատանքները[93]։ Հակառակ դեպքում պիտի ենթադրել, որ այդ զոհաբերությունները նշել են ջրանցքի շինարարության տարբեր փուլերի ավարտը[94]։

* * *

Ուրարտուում եղել են նաև այլ ծեսեր, որոնց մասին տվյալները էլ ավելի սակավ են, կամ բոլորովին բացակայում են. հայտնի է միայն, որ համապատասխան զոհաբերություններ են կատարվել քաղաքների, տաճարների, տների ու այլ շինությունների հիմնադրման ժամանակ ու կառուցումն ավարտելուց հետո։ Սասնավորապես Կարմիր բլուրի արձանագրությունում հիշատակվում է զոհաբերությունների մասին, որոնք պիտի կատարվեին տաճարի կառուցման տարբեր փուլերում, իսկ Արգիշթեխինելե քաղաքի արևելյան ամրոցի պեղումների ժամանակ, պալատական համալիրի սենյակների ծեփի տակ (բոլոր այն դեպքերում, երբ ստուգման նպատակով ծակվել է սենյակի հատակը) բացվել են զոհաբերված կենդանիների ոսկորներ։

Բ. Բ. Պիոտրովսկին, քննելով ուրարտական կնիքների պատկերագրությունը, ուշադրություն է դարձրել կենաց ծառի պաշտամունքի հետ կապված արարողությունները պատկերող փորագրությունների վրա։ Հետաքրքիր է, որ այդ արարողություններին մասնակցել է նաև արքան, առյուծի ուղեկցությամբ։ Վեր-

---

92 Ա. Ա. Օդաբաշյան. նշվ. աշխ., էջ 23։

93 Տե՛ս Զվարթնոցի արձանագրության Գ. Ա. Մելիքիշվիլու առաջարկած թարգմանությունը (УКН, с. 345)։

94 Տե՛ս Ֆ. Վ. Քյոնիգի (HChI, № 126, IV—V) և Հ. Հ. Կարագյոզյանի [Հ. Հ. Կարագյոզյան. Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին (ՈՒԱ).—Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. Երևան, 1981, № 36] առաջարկած թարգմանությունները և Արճեշի արձանագրության Քյոնիգի առաջարկած թարգմանությունը (HChI, № 125, S. 156)։

չինս, ինչպես ենթադրվում է, պահվել է ուրարտական տաճարներում որպես սուրբ կենդանի։

Հին աշխարհում ծիսական արարողությունները հաճախ ուղեկցվում էին մարդական խաղերով. այդպես էր նաև Հայաստանում ու հեթիթական աշխարհում, ուր «մրցություններ» էին տեղի ունենում գրեթե բոլոր տոներին։ Հայտնի է, որ հեթիթները մրցում էին վազքում, հեծելավազքում, ըմբշամարտում և այլն[95]։ Ամենայն հավանականությամբ Ուրարտուում ևս նման տոնակատարություններն ուղեկցվում էին մրցությամբ, որոնց մասնակցում էր նաև արքան. այդ մասին են վկայում Մինուա արքայի Սղգայի կոթողը, ուր հիշատակվում է Մինուայի արտակարգ հաջող թռիչքի մասին, իր Արծիբինե ձիուն նվաստած[96], ինչպես և Արգիշթե II արքայի արձանագրությունը, ուր խոսվում է այն մասին, որ Արգիշթե II-ի արձակած նետն անցել է 950 արմնկաչափ (476 մ) տարածություն[97]։ Պիտի ենթադրել, որ այս կոթողները կանգնեցվել են մրցությունում նրանց տարած հաղթանակի առթիվ։

Ենթադրվում է, որ արագության մրցումներն ու այլ «խաղեր» ունեցել են տիեզերքի արգասաբեր ուժերի խթանմանն ու վերածնմանը նպաստող նշանակություն, ինչպես անհատի, այնպես էլ ամբողջ կոլեկտիվի համար ճգնաժամային ժամտնակներում. նախ և առաջ գարնանը և աշնանը[98]։

Տիեզերքի եռամասնության մասին պատկերացումն Ուրարտուում։ Տարածության ու ժամանակի մասին ուրարտացիների ունեցած պատկերացումների մասին տվյալները սակավ են։ Պիտի ենթադրել, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչները դարեր շարունակ առնչվելով Միջագետքի ու Փոքր Ասիայի քաղաքակրթությունների հետ, ծանոթ էին նրանց նվաճումներին այս բնագավառում, որին գումարված պիտի լիներ նաև սեփական փորձը։ Բուն ուրարտական աղբյուրներից, սակայն, հայտնի է միայն, որ ուրարտացիները ժամանակը բաժանել են տարիների (տե՛ս, օրինակ, Արգիշթե I և Սարդուրե II արքաների տարեգրությունները), իսկ տարին՝ ամիսների[99]։ Երկրագործական-եղանակային տոների գոյության փաստն Ուրարտուում վկայում է այն մասին, որ տարին այստեղ բաժանվել է եղանակների։ Քանի որ հայտնի են երեք նման տոներ, ապա կարելի է ենթադրել, որ ուրարտական եղանակներն էլ եղել են երեքը։

Տիեզերքի կառուցվածքի մասին եղած պատկերացման մասին ուրարտական աղբյուրներից հայտնի է միայն մեկ տվյալ. Մհերի դռան արձանագրությունում զոհեր են մատուցվում «լեռների աստծուն՝ 1 ցուլ (և) 2 խոյ, դաշտերի աստծուն՝ 1 ցուլ (և) 2 խոյ, ծովերի աստծուն՝ 1 ցուլ (և) 2 խոյ»[100], որոնք կազմում են ուրարտական դիցաբանի սրբությունների 7-րդ խումբը[101]։ Դեռևս Մ. Իմիշնայդերն է մատնանշել «երեք» թվի պաշտամունքի առկայությունն

---

95 В. Г. Арзинба. Указ. соч., с. 79—81.

96 УКН, № 110.

97 УКН, № 277.

98 В. Г. Арзинба. Указ. соч., с. 80.

99 *Ում, էջ 81, ծան. 19։*

100 *«Լեռների աստծուն»* KUR$_{e}$baninaue DINGIR (HChI, № 10, *տող 18)։ Հ. Հ. Կարապետյանի թարգմանությամբ՝ «լեռնցիների աստծուն» (Ում, № 6)։ «Դաշտերի աստծուն»* KUR$_{a}$lganinaue DINGIR (HChI, № 10, *տող 18), Հ. Հ. Կարապետյանի թարգմանությամբ՝ «դաշտեցիների աստծուն» (Ում, № 6)։ «Ծովերի աստծուն»* ENGUR$_{Ş}$uninaue DINGIR [УКН, № 27, стрк. 19, 64, HChI, № 10, *տող 19, 64. այս հրատարակություններում* ENGUR *«ծով», «ջրային անհունություն» ցուցիչը կարդացված է* DINGIR *(«աստված») ձևով։ Ցուցիչի հիշտ ընթերցումն* ENGUR *ձևով առաջարկել է Մ. Ա. Իսրայելյանը]։*

101 *Ս. Գ. Հմայակյան. Ուրարտական դիցարանի «արքությունները».—«Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 210։*

Ուրարտուում[102], հիմնականում նկատի ունենալով այն հանդամանքը, որ ուրարտական շատ արձանագրություններ կրկնվում են երիցս։ Այս ենթադրության օգտին է խոսում նաև գիցարանի կառուցվածքը, քանի որ Ուրարտուի գլխավոր աստվածները երեքն են։ Երեքն են և գլխավոր աստվածուհիները։ Աստվածությունները ամփոփված են երեք արական և երեք իգական խմբերում։ «Սրբությունների» խմբերը կազմված են երեքական հասկացություններից (մեկ բացառությամբ)։ Հետաքրքիր սպասելի է, որ Ուրարտուի երեք գլխավոր աստվածությունների անունները (գլխավոր եռյակը) Մհերի դռան արձանագրությունում հիշատակվեին երեք անգամ և ոչ թե երկու, ինչպես կարծվում է։ Հնարավոր է, որ այս խմբում ամփոփված հասկացությունները հենց գլխավոր եռյակի երրորդ հիշատակությունն են արձանագրությունում. այսինքն. «լեռների աստված» անվան տակ նկատի են առնվել Խալդեն ու երկինքը (լեռը երբեմն երկնքի, իսկ «համաշխարհային լեռը» նաև տիեզերքի նշանակն էր, իսկ Խալդեն, ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով, երկնքի աստվածն է եղել), «դաշտերի աստված» անվան տակ՝ Թեյշեբան ու երկիրը [Թեյշեբան, որպես պտղաբերող անձրևի աստվածություն պիտի որ առնչվեր և դաշտերի (ըստ Ֆ. Ս. Ֆոնդեի «բերքատու դաշտերի») պաշտամունքի հետ], իսկ «ծովերի աստված» անվան տակ՝ Շիվինեն (Շիվինեի՝ արեի աստվածության և ծովի՝ հանդերձյալ աշխարհի նշանակներից մեկի, փոխառնչության մասին են վկայում հեթիթական ու հայկական առասպելները։ Ըստ հեթիթական մի առասպելի արեվի աստվածությունը ծագել է արևելյան ծովից. այդ ծովը, ըստ Վ. Վ. Իվանովի, Վանա լիճը կարող է լինել։ Համաձայն Վանի շրջակայքից Գարեգին Սրվանձտյանցի հավաքած ավանդությունների՝ արեը մայր է մտել Վանա լճում, լիճ, որը նույն ավանդությունների համաձայն ընկալվել է որպես այն աշխարհի նշանակ)։ Այս երևույթը ամբողջովին համընկնում է համանման հեթիթական պատկերացումների հետ, ուր «ծով» հասկացությունն առնչվում էր արեի պաշտամունքի ու հանդերձյալ աշխարհի հետ, «խորունկ հովիտներ» հասկացությունը՝ երկրի, իսկ «լեռներ» հասկացությունը՝ երկնքի հետ[103]։ Այլ խոսքով՝ ուրարտացիների պատկերացմամբ տիեզերքը կազմված է եղել երեք աշխարհներից՝ երկնքից (վեր), երկրից (մեջտեղ) և սաորդետնյա աշխարհից (վար)։

КУЛЬТОВЫЕ СООРУЖЕНИЯ, ЖРЕЧЕСТВО, РИТУАЛЫ И ПРЕДСТАВЛЕНИЯ О ТРЕХЧАСТНОСТИ ВСЕЛЕННОЙ В УРАРТУ

С. Г. АМАЯКЯН

Резюме

В статье рассматриваются урартские культовые сооружения É „дом", É.BAR «храм», suse (É.BAR TUR) «малый храм», iarane (É.BAR ŠÁ.DI), „горный храм" „обитель", KÁ „ворота", переносно—„храмовый комплекс", puluse „стела", É asilḫuse «дом жертвоприношений». Приводятся свидетельства того, что город Мусасир (Ардини) был культовым центром царствующей династии. Религиозным центром урартского государства был город Тушпа, а верховным жрецом страны—царь. Рассматриваются ритуалы коронации, военного похода, сезонно-аграрные ритуалы, погребальный обряд. Говорится и о том, что в надписи *Мгери дур*, в седьмой группе «святынь» нашло отражение представление урартов о вертикальной структуре вселенной.

---

[102] M. Riemchneider. Die urartäischen Gottheiten.—Orientalia, Vol. 32, Fasc. 2. Nova series, S. 158—159..

[103] В. Г. Ардзинба. Указ. соч., с. 89—97.